քեսանդրն. և էր ինքն զօրաւոր առաւել տասնապատիկ քան զՑուլիանոս՝ ի վերայ քրիստոնէից. մանաւանդ եւս առաւել ողորմելի Հայ ազգին գլուխն բազում փորձանս յարոյց. զոր ոչ է արժան խօսել և կամ լսել ումեք. որպէս և կայ ի գիրս յառաջագոյն[1], որչափ ինչ արար եղկելոյ Հայոց ազգին. բայց ինքնին Տէր հատուցէ չարին ըստ չարութեան իւրում, և ինքն լիցի վրէժխնդիր իւր ամենակարող զօրութեամբն: Եւ յորժամ եկն զօրովք իւրովք այս առաջասացեալ Տեսրոթն, և մերձեցաւ ի յայդ խուժադուժ երկիրն Օլախացն, նա այդ խաբեբայ չըներն՝ Օլախի մեծարարքն՝ ստեցին զիւրեանց երդումն, որպէս և գրել էին նմա, թէ դու գաս՝ նայ մեք զմեր պարոն կու սպաննեմք և քեզ կու հնազանդիմք, որ դու լինիս մեր վրայ պարոն: Նա այս պեղծ Ցու-

1. Ոչ յառաջ՝ այլ յետոյ քիչ մ՚աւելի երկար գրուած է, ինչպէս տեսնէ ընթերցողն: Սակայն հաւանական է թէ երկարօրէն այլ գրած ըլլար հեղինակն, նա և Շահֆանին հալածանքը:

ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ՕԼԱԽԱՑ ԵՐԿՐԻ ՀԱՅԵՐՈՒՆ

Ի ԹՕԽԱԹՑԻ ՄԻՆԱՍ ՍԱՐԿԱՒԱԳԷ ԱՍԱՑԵԱԼ

Գոչեմ առ ձեզ ողբերգական
Հառաչելով յոյժ լալական,
Քահանայք և աշխարհական,
Մունդըր դըրեք ամենեքեան.
Ի թվին Հայոց հազար ամին
Տասն և վեցն էր օգոստոսին,
Աստուածածնի փոխման օրին,
Ի տէրունի օր կիրակին.
Ի այս[1] վերջի ժամանակի՝
Փորձանք եկաւ Հայոց ազգի,
Վասն մեղացըն մեր յայտնի,
Զոր գործեցին ի յաշխարհի:
Հիւսիսական կողմ աշխարհի
Փոքրիկ երկիր կայ Օլախի,
Բազում Հայք կայր իւրեանց միջի
Լաւ քրիստոնեայք և անուանի.
Երիցանիքն ուսած էին,
Ժամատեղօք պայծառ էին.
Խիստ փառաւոր Հայեր կային.
Յանկարծ փորձանք եկաւ նոցին:

Աւլախ ազգին մեծ վոյվոտան
Անուամբ կոչէր ինքն Ըշտըֆան[2],
Մանուկ տիօք ամբարտաւան,
Բազում չարիք արար մարդկան.
Նա հաւատովն էր Հոռոմի,
Դաւանութեամբ Քաղկեդոնի.
Նոր չար գործեաց Հայոց ազգի
Զոր ոչ բնաւ եղեւ երկրի.
Չար թագաւորքըն առաջին
Այսպէս չարիք ոչ արարին,
Զոր դա գործեաց Հայոց ազգին
Լուսաւորչի փոքրիկ հօտին:
Աստուածածնի օրըն փոխման,
Աւլախաց ազգին չար վոյվոտան՝
Իւր պարոնայքըն միաբան
Սեչով քաղքի բերդըն մըտան.
Եպիսկոպոսք իւրոյ ազգին
Աւագերէցք ի միասին.
Նստան ի հաց ի սեղանին
Ուրախանալ ի միասին.

1. Ամ. Օ. Եւ այս:

2. Մականուանեալ Թարէս: